Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2024 թ. հուլիսի 10-ի նիստում
Արձանագրություն № 01-07/24
Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր՝

Մ.Գ. Բարսեղյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան) բակալավրիատի ընդունելության ներբուհական քննական առարկաների նախապատրաստական լրացուցիչ դասընթացների կազմակերպման և իրականացման կանոնակարգը (այսուհետ՝ կանոնակարգ) մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1062-Ն որոշմամբ հաստատված կարգի, համալսարանի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա:

2. Նախապատրաստական լրացուցիչ դասընթացը վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթական ծրագիր է, նախատեսված է այն դիմորդների (այսուհետ՝ ունկնդիր) համար,

ովքեր ցանկանում են պատրաստվել համալսարանի ընդունելության ներբուհական քննություններին:

3. Սույն կանոնակարգով սահմանվում է համալսարանի բարձրագույն կրթության առաջին աստիճանում՝ բակալավրիատում, ընդունելության ներբուհական քննական առարկաների նախապատրաստական լրացուցիչ դասընթացների կազմակերպման, իրականացման և ուսուցման, գիտելիքների ընթացիկ ստուգման գործընթացները, ինչպես նաև դասընթացներին ունկնդրի մասնակցության պայմանները:

4. Սույն կանոնակարգով սահմանված նախապատրաստական լրացուցիչ դասընթացների նպատակն է լրացուցիչ կրթական ծրագրերի միջոցով համալսարան ընդունվելու մատչելիության ապահովումը, ընդունելության ներբուհական քննական առարկաներից գիտելիքների և կարողությունների, ինչպես նաև ունկնդրի մասնագիտական կողմնորոշման, տեսողական ընկալման, ստեղծագործական ունակությունների, հմտությունների զարգացումը:

2. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

5. Նախապատրաստական լրացուցիչ դասընթացները կազմակերպվում են համալսարանի ընդունելության ներբուհական քննությունների բովանդակությանը և առարկայական չափորոշիչներին համապատասխան: Նախապատրաստական լրացուցիչ դասընթացներն իրականացվում են սահմանված ծրագրերով և ժամանակացույցով:

6. Նախապատրաստական լրացուցիչ դասընթացների կազմակերպման և իրականացման տևողության, ժամանակացույցի, մասնակիցների կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի, դասընթացի վճարի վերաբերյալ հայտարարությունը տեղադրվում է համալսարանի պաշտոնական կայքում:

7. Նախապատրաստական լրացուցիչ դասընթացներն իրականացվում են երկու փուլով: Ունկնդրի նախապատրաստական խմբի առաջին փուլի դասընթացի ուսուցման լրացուցիչ կրթական գործընթացի տևողությունը 4 (չորս) ամիս 2 (երկու) շաբաթ է:

Նախապատրաստական լրացուցիչ դասընթացները կազմակերպվում են կրթական առարկայական ծրագրերին համապատասխան՝ շաբաթական 2 (երկու) օր՝ յուրաքանչյուրը 120 րոպե տևողությամբ:

8. Նախապատրաստական լրացուցիչ դասընթացները կազմակերպվում են համալսարանում առկա ուսուցման ձևով, խմբային ձևաչափով՝ լսարանային պայմաններում: Յուրաքանչյուր խմբում ընդգրկվում են 6-12 ունկնդիր, որով ապահովվում է անհատական մոտեցում և արդյունավետ ուսուցում: Յուրաքանչյուր խումբ ունի դասընթացների մասնակիցների հաճախումների հաշվառման և այլ նշումների մատյան:

9. Նախապատրաստական լրացուցիչ դասընթացների ծրագրերը ներառում են ուսուցման հետևյալ հիմնական առարկաները՝

1) Գծանկար,
2) Կոմպոզիցիա,
3) Գծագրություն,
4) Մաթեմատիկա (Գիտելիքի, ստեղծագործական կարողությունների թեստ),
5) Գծագրություն (Գիտելիքի, ստեղծագործական կարողությունների թեստ):

10. Նախապատրաստական լրացուցիչ դասընթացներն իրականացվում են առարկայական ծրագրերին և ուսումնական գործընթացի ժամանակացույցին համապատասխան, ունկնդրի կարիքի գնահատմամբ, որն անհրաժեշտության դեպքում իրականացվում է ունկնդրին ուղղված հարցաշարի պատասխանների միջոցով:

11. Նախապատրաստական լրացուցիչ դասընթացներն իրականացվում են համալսարանի համապատասխան ամբիոնների մասնագետների՝ ամբիոնի վարիչի առաջադրմամբ, մասնագիտական կրթություն և բարձր որակավորում ունեցող դասախոսների կողմից: Յուրաքանչյուր դասախոս վարում է դասընթացի մասնակիցների հաճախումների մատյանը, որում յուրաքանչյուր օրվա դասընթացի համար կատարում է նշումներ դասընթացի թեմայի և դասընթացին՝ ունկնդիրների մասնակցության (հաճախումների) մասին: Երեք և ավելի անհարգելի բացակայության դեպքում տեղեկացվում է ունկնդրին, անչափահաս ունկնդրի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչին՝ բացակայության հետևանքների մասին:

12. Նախապատրաստական լրացուցիչ դասընթացներին մասնակցող ունկնդրի համար կազմակերպվում են ստացած գիտելիքների ընթացիկ գնահատում:

3. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ

13. Նախապատրսատական լրացուցիչ դասընթացներին կարող են մասնակցել միջնակարգ կամ միջին մասնագիտական լրիվ կրթություն ունեցող շրջանավարտները, միջնակարգ կրթության կրթական աստիճանի 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների սովորողները, ինչպես նաև բոլոր նրանք, ովքեր ցանկանում են ընդունվել բուհ:

14. Յուրաքանչյուր ուսումնական տարվա բակալավրի ընդունելության ներբուհական քննական առարկաների համար կազմակերպվող նախապատրաստական լրացուցիչ դասընթացների վճարների, դասընթացները վարող դասախոսների վարձատրության չափը և առարկայական ծրագրերը սահմանվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

15. Նախապատրաստական լրացուցիչ դասընթանցերին մասնակցելու համար ունկնդիրը կամ նրա օրինական ներկայացուցիչը, կամ նրա կողմից լիազորված անձը համալսարանի ընդունելության բաժին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը, օրինական ներկայացուցչի դեպքում՝ դիմողի ծննդյան վկայականի, օրինական ներկայացուցչի, լիազորված անձի դեպքում՝ լիազորողի և ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթերի լուսապատճենները և լիազորագրի բնօրինակը,

2) Նախապատրաստական լրացուցիչ դասընթացի վճարման անդորրագիրը (պարտադիր պետք է լրացվեն հետևյալ տվյալները՝ ունկնդրի անունը, ազգանունը, հայրանունը և դասընթացի անվանումը):

16.Նախապատրաստական լրացուցիչ դասընթացներին մասնակցելու համար համալսարանը յուրաքանչյուր անչափահաս ունկնդրի օրինական ներկայացուցչի հետ կնքում է պայմանագիր: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելու պահից

և գործում է մինչև ունկնդրի նախապատրաստական լրացուցիչ դասընթացի՝ ծրագրով նախատեսված ուսումնառության ավարտը:

17. Ներկայացված փաստաթղթերի ընդունումից և պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո ուսումնառության ընթացքում դիմորդները համարվում են համալսարանի ունկնդիրներ:

18. Նախապատրաստական լրացուցիչ դասընթացներին մասնակցող ունկնդիրն իրավունք ունի՝

1) ստանալ որակյալ կրթություն՝ համաձայն ընտրված ուսուցման ծրագրի,

2) մասնակցել համալսարանում դասավանդվող նախապատրաստական խմբի այլ դասընթացներին,

3) համաձայնագրով ավելացնել դասընթացի լրացուցիչ առարկա,

4) անվճար օգտվել համալսարանի գրադարանից, բուժսպասարկման ծառայությունից,

5) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ,

Ունկնդիրը պարտավոր է՝

1) մասնակցել նախատեսված նախապատրաստական լրացուցիչ դասընթացներին, սահմանված ժամկետներում կատարել բոլոր առաջադրանքները, մասնակցել գիտելիքների ստուգման գործընթացներին,

2) բացառել դասերից անհարգելի բացակայությունը, իսկ անհրաժեշտության դեպքում ներկայացնել հիմնավորող տեղեկանք,

3) հոգատարությամբ և խնամքով վերաբերվել համալսարանի գույքին ու տեխնիկական սարքավորումներին,

4) համալսարանի հետ կնքված պայմանագրի համաձայն՝ սահմանված կարգով և ժամկետներում վճարել նախապատրաստական լրացուցիչ դասընթացների վճարը,

5) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

19. Ունկնդիրը քննություն չի հանձնում նախապատրաստական լրացուցիչ դասընթացներին մասնակցելու համար, ինչպես նաև դասընթացներն ավարտելուց հետո:

20. Ունկնդիրը նախապատրաստական լրացուցիչ դասընթացներին մասնակցելու համար վարձավճարը վճարում է համալսարանի բանկային հաշվին անկանխիկ՝ համալսարանի հաշվարկային հաշվին մուտքագրելու միջոցով: Նախապատրաստական խմբի դասընթացների ծրագրով կրթական ծառայությունների վճարումը կատարվում է ըստ ամիսների հավասարաչափ յուրաքանչյուր ամիս՝ տվյալ ամսվա մինչև ամսվա 5-ը:

21. Պայմանագրով սահմանված ժամկետում նախապատրաստական լրացուցիչ դասընթացների վճարը չվճարելու, կապը խզելու և այլ հիմնավորող փաստերի դեպքում համալսարանն իրավունք ունի դադարեցնել ունկնդրի մասնակցությունը ուսումնական գործընթացին և լուծել պայմանագիրը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

22. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

23. Այն հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն կանոնակարգով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

24. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում համալսարանի ռեկտորի ստորագրությամբ հաստատվելուց և համալսարանի կայքում հրապարակվելուց հետո՝ տասներորդ օրը:

Գիտական քարտուղար՝ Լ.Հ.Լևոնյան

10-ը հուլիսի, 2024թ.

գիտական խորհրդի որոշում № 01-07/24